

DIAGNOSING OF LEFT-HANDEDNESS AND METHODS FOR DETERMINING
THE LEADING HAND**Nazik Harutyunyan***Doctor of Pedagogical Sciences, Professor**Yerevan State University, Armenia**nazik_harutiunian@yahoo.co.uk***Anahit Khlopuzyan***PhD student of Yerevan State University, Armenia**anahit.khlopuzyan@ysu.am***Summary**

Left-handedness, being a feature of personality, and sometimes being on the same content level as education and training, has completely different requirements. It includes unintended, spontaneous influences, thanks to which a person adapts to society and becomes a full member of society. Note that the formation of left-handed characteristics does not always begin with the appropriate moment of existence and the creation of relationships with other people. That is why the left-handed child should be considered not only as a biological organism, but also as a social being who can transform himself to adapt to the social environment. The adaptation process of left-handed children leads to radical changes in the organization of teaching in public schools, transforming teaching methods, technologies, in particular, teacher-left-handed student relations.

In order to study the process of manifestation of left-handedness in a public school, it is necessary to refer to the diagnostic methods of left-handedness, which is transferred from the biological and social sphere to the sphere of pedagogy. Therefore, it is important to study it in the unity of social and pedagogical processes.

Keywords: left-handedness, adaptation, diagnostics, method, right-handedness, leading, bipolarity.

ДИАГНОСТИРОВАНИЕ ЛЕВОРУКОСТИ И СПОСОБЫ ОПРЕДЕЛЕНИЯ
ВЕДУЩЕЙ РУКИ**Назик Арутюнян***Доктор пед. наук, профессор**Ереванский государственный университет, Армения**nazik_harutiunian@yahoo.co.uk***Анаит Хлопузян***Соискатель**Ереванский государственный университет, Армения**anahit.khlopuzyan@ysu.am***Аннотация**

Леворукость, будучи чертой личности, а иногда и на том же содержательном уровне, что и воспитание и обучение, предъявляет совершенно иные требования. Надо обратить внимание, что формирование леворуких характеристик не всегда начинается с соответствующего момента существования и создания отношений с другими людьми. Именно поэтому ребенка-левшу следует рассматривать не только как биологический организм, но и как социальное существо, способное трансформироваться для приспособления к социальной среде.

Процесс адаптации детей-левшей приводит к коренным изменениям в организации обучения в общеобразовательных школах, трансформируя методы обучения, технологии, в частности, отношения между учителем и учеником-левшой.

Для изучения процесса проявления леворукости в общеобразовательной школе необходимо обратиться к методам диагностики леворукости, которые переносятся из биолого-социальной сферы в сферу педагогики. Поэтому важно изучать это явление в единстве социальных и педагогических процессов.

Ключевые слова: леворукость, адаптация, диагностика, метод, праворукость, ведущая, биполярность.

ՀԱՄԼԻԿՈՒԹՅԱՆ ԱՌՏՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՁԵՌՔԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

Հարությունյան Նազիկ*մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ.**Երևանի պետական համալսարան, Հայաստան*

nazik_harutiunian@yahoo.co.uk

Խլոպուզյան Անահիտ

հայցորդ

Երևանի պետական համալսարան, Հայաստան

anahit.khlopuzyan@ysu.am

Համառոտ ներածական: Ձախլիկությունը, լինելով անձի դրսևորման առանձնահատկություն, գտնվելով նաև դաստիարակության ու ուսուցման հետ միննույն բովանդակային հարթության վրա, ունի բոլորովին այլ պահանջներ: Այն ներառում է ոչ մտադրված, ինքնաբերական ազդեցություններ, որոնց շնորհիվ անձը հարմարվում է սոցիումին՝ դառնալով հասարակության լիիրավ ու լիարժեք անդամ:

Նկատենք, որ ոչ միշտ է ձախլիկության բնութագրիչների ձևավորումը սկսվում գոյի համապատասխան պահից և այլ մարդկանց հետ հարաբերությունների ստեղծումից: Այդ իսկ պատճառով ձախլիկ երեխային պետք է դիտարկել ոչ միայն որպես կենսաբանական օրգանիզմ, այլև որպես սոցիալական էակ, որը կարող է վերափոխել իրեն՝ հարմարվելով սոցիալական միջավայրին:

Ձախլիկ երեխաների հարմարման գործընթացը հանգեցնում է հանրակրթական դպրոցում ուսուցման կազմակերպման արմատական փոփոխությունների՝ վերափոխելով ուսուցման մեթոդները, տեխնոլոգիաները, մասնավորապես ուսուցիչ-ձախլիկ աշակերտ հարաբերությունները:

Ձախլիկության դրսևորման գործընթացը հանրակրթական դպրոցում ուսումնասիրելու համար անհրաժեշտ է անդրադառնալ ձախլիկության ախտորոշման մեթոդներին, որոնք կենսաբանական ու սոցիալական ոլորտից տեղափոխվում են մանկավարժության բնագավառ: Հետևաբար կարևոր է այն ուսումնասիրել սոցիալական ու մանկավարժական գործընթացների միասնության մեջ:

Բանալի բառեր: Ձախլիկություն, հարմարում, ախտորոշում, մեթոդ, աջլիկություն, առաջատար:

Հիմնախնդիրը: Ուսումնասիրության հիմնախնդիրն է ձախլիկության ախտորոշումն ու առաջատար ձեռքը որոշելու ուղիների վերհանումը:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Հիմնախնդրին անդրադարձել են տարբեր գիտնականներ իրենց համապատասխան հետազոտություններում (Անանիս Բ., Բեգուկյիս Մ., Գրիմակ Լ. և ուրիշներ):

Հետազոտության նպատակն է վերլուծության ենթարկել ձախլիկության ախտորոշման մեթոդներն ու առաջատար ձեռքի որոշման ուղիները:

Հետազոտության նորույթը ձախլիկության ախտորոշման տարբեր մեթոդների ու միջոցների ուսումնասիրությունների վերլուծությունն ու համադրումն է:

Հիմնական նյութի շարադրանք: Ձախլիկությունը, լինելով անձի դրսևորման առանձնահատկություն, գտնվելով նաև դաստիարակության ու ուսուցման հետ միննույն բովանդակային հարթության վրա, ունի բոլորովին այլ պահանջներ: Այն ներառում է ոչ մտադրված, ինքնաբերական ազդեցություններ, որոնց շնորհիվ անձը հարմարվում է սոցիումին և դառնում հասարակության լիիրավ ու լիարժեք անդամ:

Նկատենք, որ ոչ միշտ է ձախլիկության բնութագրիչների ձևավորումը սկսվում գոյի համապատասխան պահից և այլ մարդկանց հետ հարաբերությունների ստեղծումից: Այդ իսկ պատճառով ձախլիկ երեխային պետք է դիտարկել ոչ միայն որպես կենսաբանական օրգանիզմ, այլև որպես սոցիալական էակ, որը կարող է վերափոխել իրեն և հարմարվել սոցիալական միջավայրին:

Ժամանակակից բժշկության հիմնախնդիրների հետազոտությամբ զբաղվող գիտնականները նշում են, որ կակազություն ունեցող յուրաքանչյուր երրորդ երեխան փոխարկված ձախլիկ է [5, էջ32]: Վերաուսուցումը երեխային հանգեցնում է գրելու, խոսելու սպազմի, և վտանգավորն այն է, որ այդ խանգարումները կրում են խրոնիկական բնույթ: Այս վիճակը չի ենթարկվում հոգեբանական ու մանկավարժական ուղղման և պահանջում է երկարատև բուժում: Այս շրջանում ձախլիկ երեխան ունենում է բարձրագույն դյուրագրգիռություն, իմպուլսիվություն, որի հիման վրա էլ հաճախ ձևավորվում են առողջական խնդիրներ:

Ձախլիկ երեխաներին փոխարկել աջլիկի նշանակում է «կոտրել» նրանց հոգեկանի առանձնահատուկ որակները, ինչը կարող է բացասաբար ազդել երեխայի մտավոր ունակության և առողջության վրա: Այս տարիքում տեղի են ունենում վերլուծահամադրական գործողությունների բարդ ձևերի կայացումը, վերացական մտածողության ձևավորումը:

Ձախլիկության խնդիրը հնարավոր է լուծել միայն երեխաների մոտ այս երևույթի հոգեբանական ու ֆիզիոլոգիական նախադրյալները, նրանց նյարդային համակարգի անհատական առանձնահատկությունները հաշվի առնելով: Համեմատաբար հանգիստ գործունեությունից հետո երեխան հանդիպում է մի նոր անցումային շրջանի, երբ կրկին փոխարկվում է գերիշխող, առաջատար ձեռքի կիրառումը, և փոխվում են զարգացման մի շարք գործոններ:

Ձախլիկության փոխարկման բացասական հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է ժամանակին ճշգրիտ որոշել առաջատար ձեռքը: Այս առումով մենք կդիտարկենք գիտական ու մեթոդական գրականության մեջ նկարագրված ձախլիկության ախտորոշման մեթոդները:

Անկայուն շրջան է, երբ ձախլիկ երեխայի մոտ միաժամանակ կարող են ծագել իրար շատ հակասող բազում հույզեր ու հոգեվիճակներ, տարաբնույթ խնդիրներ: Հակադիր ու հակասական գծերը, ձգտումները համագոյակցում և հակադրության մեջ են մտնում՝ պայմանավորելով երեխայի բնավորության, վարքի ու անձնային անկայունությունը: Այս վերափոխման ճգնաժամը ներքին ու արտաքին վերափոխումների արտահայտման բուռն շրջանն է, ինչն էլ պատճառ է դառնում երեխայի ֆիզիոլոգիական, սոցիալական ու հոգեկան զարգացման տեմպերի անհամապատասխանությանը:

Ինչպե՞ս է դրսևորվում ձախլիկությունը երեխայի մոտ:

Առաջին հերթին պայմանավորված է ժառանգականությամբ: Եթե ծնողների կամ ընտանիքի որևէ անդամի մոտ առկա է ձախլիկություն, նրանք պետք է պատրաստ լինեն, որ դա կարող է կրկնվել նաև իրենց երեխաների մոտ: Երկրորդ հերթին կարող է լինել կյանքի անկախատեսելի պայմաններում ձեռք բերված ձախլիկություն, ինչին ծնողները պատրաստ չեն կյանքում, ինչը չի դրսևորվել իրենց մոտ, սակայն դրսևորվում է երեխաների կյանքում: Այստեղից էլ գալիս է խնդիրների ճնշող թիվը:

Ձեռքի նախընտրության առաջին դրսևորումները հանդիպում են 7-9 ամսական երեխաների մոտ: Աջ և ձախ կողմերի միջև տարբերությունը սկզբում թույլ է, այնուհետև մեծանում է և արդեն 3 տարեկանում ակնհայտ է դառնում, իսկ հետո՝ կայունանում: Եթե առաջատար ձեռքի ընտրությունը որոշվում է 3 տարեկանում, ապա դրա օգտագործման ինտենսիվությունը զգալիորեն ավելանում է 3-9 տարեկանում [2, 81]:

Երեխայի զարգացման ընթացքում բարելավվում է երկու ձեռքերի մասնակցությունը պահանջող տարբեր շարժումների համակարգում: Երեխայի շարժողական գործունեության վերաբերյալ դիտարկումներ կատարելու դեպքում կարող եք շատ արագ համոզվել, որ մի ձեռքով կատարվող գործողությունները բավականին պարզ են (բացառությամբ գրելու ու նկարելու) և հիմնականում բաղկացած են նույն շարժումը կրկնելուց:

Ամենօրյա շարժիչային գործունեության մեծ մասը պահանջում է երկու ձեռքերի մասնակցություն, սակայն յուրաքանչյուր ձեռք ունի իր հատուկ գործառույթը: Երեխայի համար հանգույցները արձակելու, կոշիկները կապելու, խորանարդիկները ծալելու ու հավաքելու գործողությունների իրականացման դիտարկումները ցույց են տալիս, որ մի ձեռքը առաջնորդում է, ակտիվ շարժում է կատարում, իսկ մյուսը բռնում է առարկան:

Հատկապես կարևոր է առաջին դասարան հաճախելուց առաջ որոշել երեխայի առաջատար ձեռքը, և եթե կասկած կա, ապա ավելի լավ է դա անել ավելի վաղ՝ 4-5 տարեկանում: Հենց այս տարիքում է, որ երեխան սովորում է ճիշտ բռնել մատիտը, գրիչը, անհրաժեշտ է, որ նա կատարի այդ բարդ գործողություններն իր առաջատար ձեռքով: Փոխարկումը կարող է բացասաբար ազդել երեխայի աճի ու զարգացման վրա, բարդացնել ուսումնառության գործընթացը, դպրոցին հարմարվելը, ինչպես նաև հանգեցնել առողջական լուրջ խնդիրների:

Գոյություն ունեն ձախլիկության ախտորոշման մի քանի եղանակներ, որոնք կարող են օգտագործվել ինչպես տանը, այնպես էլ ուսումնական հաստատություններում: Ամենատարածված մեթոդը ձախլիկության քանակական գնահատումն է կենցաղում, ուսումնառության ու խաղային գործընթացներում, ինչն էլ ձախ ու աջ ձեռքերի օգտագործման վերաբերյալ հարցեր պարունակող հարցաթերթիկների կիրառումը [1, 39]:

Մովորաբար հարցաթերթիկները հարցնում են մարդու այն շարժիչ հմտությունների մասին, որոնք նրա մոտ ձևավորվում են շրջակա միջավայրի ազդեցության տակ: Իսկ առաջատար ձեռքի կիրառման հարմարավետությունը որոշելու հարցաթերթիկները պարունակում են հարցերի ստանդարտ փաթեթ:

✓ ո՞ր ձեռքով է գրում ավելի հեշտ ու գեղեցիկ,

✓ ո՞ր ձեռքով է գնդակ նետում, լուցկին վառում, մկրատով կտրում, հողը փորում, բացիկներ բաժանում,

✓ ո՞ր ձեռքով է թելում ասեղը, մուրճով մեխում մեխը, պահում է ատամի խոզանակը և այլն:

Այնուամենայնիվ, ցանկացած հարցաթերթիկ ինքնագնահատական է, և այն միշտ չէ, որ համընկնում է ձեռքի գործածության օբյեկտիվ գնահատման հետ:

Հարցաթերթիկների թերությունը նաև այն է, որ դրանց կառուցվածքը նպաստում է պատասխանների ավտոմատացմանը և հանգեցնում կրկնությունների [3, 23]: Երեխաների հետ աշխատելիս հատկապես դժվար է հարցաթերթիկներ օգտագործել: Ուստի նախընտրելի է ախտորոշում կատարել երեխայի գործունեության անմիջական դիտարկման ընթացքում՝ նշելով, թե որ ձեռքն է ավելի ակտիվ, ավելի հաճախ օգտագործվում, շարժումներն ավելի հստորեն ու ճշգրիտ կատարում:

Երկու ձեռքերի միաժամանակյա գործողությունների թեստերը, օրինակ՝ նկարելը (շրջանակ, քառակուսի, եռանկյուն), շատ հետաքրքիր ու բովանդակալից են: Առաջատար ձեռքի շարժումները կարող են լինել ավելի դանդաղ, բայց ավելի ճշգրիտ: Առաջատար ձեռքով գծված կերպարների գծերն ավելի հստակ են, հարթ, ցնցումը (ձեռքի դողը) ավելի քիչ է արտահայտված, անկյունները հարթված չեն, միացման կետերը չեն շեղվում:

Աջ ու ձախ ձեռքերի արագությունն ու ուժը որոշելու համար կարող են օգտագործվել տարբեր տեսակի առաջադրանքներ՝ հաշվի առնելով, որ առաջատար ձեռքի շարժման արագությունն ու ուժն ավելի մեծ են, քան ոչ առաջատար ձեռքինը: Արագությունը գնահատելու համար կան համապատասխան առաջադրանքներ, օրինակ՝ 10 վայրկյանում ցուցամատով հպումների քանակը, թերթի հարթության վրա 10 վայրկյանում գրիչով դիպչելիս կետերի քանակը (գրիչի հպումները): Յուրաքանչյուր առաջադրանք կատարվում է երեք անգամ, այնուհետև հաշվարկվում է միջին արժեքը:

Ձեռքերի ֆունկցիոնալ ասիմետրիաները բազմազան են. ձեռքերը հավասար չեն ուժով, ճշգրտությամբ, շարժման արագությամբ, դիմացկունությամբ, հստակ համակարգված գործողություններ կատարելու ունակությամբ:

Աջիկների ձախ ձեռքն ավելի դիմացկուն է ստատիկ ուժի նկատմամբ: Երեխաների մոտ ձեռքի առաջատարության որոշումն ավելի արդյունավետ է տարբեր գործողությունների կատարումը գնահատելիս: Ըստ գերմանացի հետազոտող Ֆ. Կրետչմերի՝ ձեռքի գործածությունը որոշելու համար կարելի է տեսնել, թե ինչպես է երեխան կատարում հետևյալ գործողությունները՝ ծաղիկներ ջրելով, թիակով ավազ խառնելով, ատամները խոզանակելով, փայտով գնդակը հրելով, դարակից գրքեր վերցնելով և այլն [1, 40]:

Նախընտրելի ձեռքը կարելի է որոշել՝ աջ ու ձախ ձեռքով նախշեր ու շրջանակներ նկարելով: Եթե երեխան ընտրում է բոլոր առաջադրանքները կատարել ձախ ձեռքով, և միաժամանակ շարժումները կատարվում են հեշտությամբ ու ճշգրտորեն, ապա նա ձախիկ է: Այնուամենայնիվ, Ֆ. Կրետչմերի նկարագրած առաջադրանքների օգտագործումն այնքան էլ հեշտ չէ, որքան թվում է առաջին հայացքից: Հարմարավետությունը որոշելիս ամեն ինչ կարևոր է. որտե՞ղ է շահարկման ենթակա առարկան, որտե՞ղ է երեխան, ինչպե՞ս է տրված հրահանգը: Հեշտ չէ, օգտվելով առաջարկությունից, մրցույթի ընթացքում ձեռքի գործի վերաբերյալ հետազոտություններ անցկացնել, որպեսզի երեխաները չգուշակեն առաջադրանքի նպատակը: Առաջադրանքներից կարելի է առանձնացնել հետևյալը՝ սրբել գրատախտակը, կտրել պատկեր, մկրատով նախշ, վերցնել հատակից առարկա (գնդակ), փայտիկները դնել տուփի մեջ:

Գործնականում ընտրվել են ամենաարդյունավետ առաջադրանքները, որոնց իրականացումը հնարավորություն է տալիս բացահայտելու երեխաների առաջատար ձեռքը:

Երեխային պետք է տալ թուղթ ու մատիտներ, նա պետք է նկարի այն, ինչ ուզում է: Նկարելու համար չպետք է սահմանափակել ժամանակը, ավարտելուց հետո նույնը պետք է նկարել մյուս ձեռքով: Պետք է խրախուսել երեխային այնպիսի բառերով, ինչպիսիք են. «Ես գիտեմ, որ դժվար է նույն նկարը նկարել աջ (ձախ) ձեռքով, բայց դու փորձում ես»: Այս առաջադրանքում պետք է համեմատել գծագրերի որակը: Պետք է ապահովել, որ երեխան ճիշտ ու հարմարավետ բռնի մատիտը, չլարվի առաջադրանքը կատարելիս և ճիշտ նստի: Տրված բոլոր առաջադրանքներում առաջատար ձեռքը պետք է համարել ավելի ակտիվ գործողություն կատարողը:

Կտրելու առաջադրանք կատարելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ավելի ակտիվ կարող է լինել ձեռքը, որով երեխան բռնում է մկրատը, և այն, որով նա բռնում է թուղթը: Մկրատը կարելի է

ամրացնել, իսկ երեխան պտտելու է բացիկը՝ հեշտացնելով կտրելու գործընթացը: Պետք է զգուշանալ սխալ արդյունք ստանալուց, եթե մկրատի չափսերն ու ձևը չեն համապատասխանում երեխայի ձեռքին:

Ասեղի, թելի կամ լարերի վրա ուլունքներ կամ կոճակներ շարելը կարող է նաև օգտագործվել որպես երեխայի առաջատար ձեռքը բացահայտելու առաջադրանքներից մեկը:

Ախտորոշման համար կարևոր առաջադրանքներից է պտտվող շարժումներ կատարելը: Երեխային հանձնարարում են բացել մի քանի շիշ, խաղալիքներ՝ պտուտակավոր գլխարկներով: Պետք է հաշվի առնել, որ երեխան կարող է շիշը կամ խաղալիքը պահել կափարիչով և պտտել սրվակը:

Հաջորդ ախտորոշիչ առաջադրանքը հանգույցների արձակումն է: Առաջատար ձեռքն այն է, որով արձակում է հանգույցը (մյուսը պահում է հանգույցը): Այս առաջադրանքում կարող է դժվար լինել գերիշխող ձեռքը մեկուսացնելը, քանի որ հանգույցները բացելը բավականին բարդ գործընթաց է, և երեխան, որպես կանոն, օգտագործում է երկու ձեռքը: Ախտորոշման արդյունքները պետք է գրանցել աղյուսակում.

Առաջադրանք	Ձախ ձեռք	Աջ ձեռք	Երկու ձեռքի կիրառում
1	+		
2		+	
3			+

Եթե առաջադրանք կատարելիս երեխան ավելի ակտիվ է աշխատում ձախ ձեռքով, ապա «Ձախ ձեռք» սյունակում դրվում է գումարման նշան (+), եթե նախընտրելի է աջը՝ «Աջ ձեռք» սյունակում: Եթե նա հավասարապես հաճախ է օգտագործում և՛ աջ, և՛ ձախ ձեռքերը, ապա «Երկու ձեռքեր» սյունակում դրվում է գումարման նշան:

Աղյուսակը պարունակում է նաև ընտանեկան ձախիկության վերաբերյալ տվյալներ: Եթե երեխան ընտանիքում ունի ձախիկ հարազատներ՝ ծնողներ, եղբայրներ, քույրեր, տատիկներ ու պապիկներ, ապա «Ձախ ձեռք» սյունակում պետք է գումարման նշան դնել, եթե ոչ՝ համման նշան «Աջ ձեռք» սյունակում:

Եթե արդյունքները հաշվարկելիս «Ձախ ձեռք» սյունակում ստացվում է գումարման ավելի քան յոթ նշան, ապա երեխան, ամենայն հավանականությամբ, ձախիկ է: Եթե «Ձախ ձեռք» սյունակում պարզվել են 2-8 առաջադրանքների գումարման բոլոր նշանները, իսկ առաջինի համար՝ նկարչությունը, գումարման նշանը կլինի «Աջ ձեռք» սյունակում, ապա դա նշանակում է, որ երեխան իսկապես կարող է ավելի լավ կատարել տնային գործերը՝ ձախ ձեռքով, իսկ գրաֆիկականը՝ աջ: Այս դեպքում գրելու համար ձեռք ընտրելիս պետք է հաշվի առնել աջ ձեռքի առավելությունը գրաֆիկական առաջադրանքներ կատարելիս:

Հազվադեպ, բայց հնարավոր է, որ երեխան սկսում է գրել և՛ աջ, և՛ ձախ ձեռքերով, երբեմն նա նկարում է ձախով և գրում աջով կամ գրիչը տեղափոխում է մի ձեռքից մյուսը՝ հերթով օգտագործելով աջ ու ձախ ձեռքերը, ինչը շատ է բարդացնում գրելու հմտությունների զարգացման գործընթացը:

Առաջադրանքների բովանդակությունը պետք է հետաքրքիր լինի երեխային, որ նա հաջորդ անգամ ևս մասնակցի: Ստացված արդյունքները պետք է կապել ավելի ընդհանուր հասկացությունների հետ, ուշադրությունը կենտրոնացնել տվյալ պահին երեխայի բարոյափոփոխական վիճակի վրա: Հարկ է նշել, որ ծնողը պետք է լինի առաջիններից, որը կոչված է ձևավորելու և ամրապնդելու երեխայի ֆիզիոլոգիական ու կենսաբանական հատկանիշները: Ահա թե ինչու միշտ չէ, որ պետք է սպասել ձախիկ երեխայի հանդեպ ուսուցիչների մոտեցմանն ու հարցերին: Ցանկալի է, որ մինչև դպրոց հաճախելը ձախիկությունը ախտորոշված լինի, երեխաներն անհրաժեշտ գիտելիքներ ունենան ձախիկության մասին: Իսկ եթե դա չի արվել ժամանակին, ապա բաց թողնվածը պետք է լրացնել, երբ երեխան դեռ ցածր դասարանում է:

Հաճախ հանդիպում ենք դեպքերի, երբ ուսուցիչները պնդում են, թե երեխան որ ձեռքն է ավելի հաճախ օգտագործում, թող այդպես գրի: Բայց գրելու համար առաջատար ձեռքի ընտրության հարցում նման տեսակետն անընդունելի է: Կան նույնիսկ հատուկ տերմիններ՝ «գրաֆիկական ֆունկցիոնալ գերազանցություն» և «ամենօրյա ֆունկցիոնալ գերազանցություն», որոնք բնութագրում են առօրյա գործունեության մեջ ձախ կամ աջ ձեռքի գերակշռող տիրապետումը [1, 37]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 80 % դեպքերում «գրաֆիկ ձախիկները» հայտնվում են «տնային ձախիկներ» հատվածում: Նույն հարաբերակցությունը վերաբերում է աշխիկներին: Բայց կան երեխաներ՝ ամբիդեքստերներ, թե՛ առօրյա, թե՛ գրաֆիկական գործողություններում: Այս ամենը ցույց է տալիս, թե որքան կարևոր և անհրաժեշտ է որոշել գերիշխող ձեռքը մինչև ակտիվ ուսումը սկսելը:

Ձախլիկության ախտորոշման ու առաջատար ձեռքը պարզելու մեծ թվով մեթոդների կիրառման գործընթացում պարզվել է, որ սխալների նվազագույն քանակը թույլ է տալիս օգտագործել այն մեթոդներն ու առաջադրանքները, որոնք ներառում են խաղային առաջադրանքներ: Բավականին մեծ դեր է խաղում առաջադրանքների աստիճանաբար բարդացումը, այս պարագայում առավել ակնհայտ է դառնում ճշգրիտ ախտորոշման աստիճանը:

Ձախլիկ երեխայի անձի զարգացման համար կարևոր են լիարժեք համագործակցային մոտեցումներ՝ ընտանիք-դպրոց: Ձախլիկ երեխային շրջապատող յուրաքանչյուր անդամ ստեղծում է երեխայի համար հարաբերությունների հատուկ ձև, հետևաբար նրանցից յուրաքանչյուրը կարող է նպաստել ձախլիկության ախտորոշման գործընթացին:

Ձախլիկ երեխայի ուսումնառության ու հարմարման հարցում դրական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է հարգել երեխայի անձը, պաշտպանել նրա իրավունքները, նրա կենսագործունեության համար բնականոն պայմաններ ապահովել, հաշվի առնել նախասիրությունները, հակումները, ընդունակությունները, փնտրել ու ընտրել ճիշտ ուղիներ ու միջոցներ:

Հարկ է նշել, որ թե՛ ուսուցիչները, թե՛ ծնողները ոչ մի կերպ չպետք է ընդգծեն երեխայի ձախլիկությունը և որևէ բան փոխելու փորձեր չանեն: Վաղ թե ուշ երեխան ինքը կնկատի այս յուրահատկությունը: Եվ այստեղ ծնողները պետք է ցույց տան, որ ձախլիկությունը նույնիսկ առավելություն են համարում, իսկ առավել ևս երկրենությունը: Պետք է ընդունել երեխային այնպիսին, ինչպիսին կա, և այդ դեպքում ձախլիկությունը խնդիր չի դառնա [4, 41]:

Եզրակացություն: Ամփոփելով նշենք, որ պետք է կարևորել ձախլիկ երեխայի տարիքային, անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, հատկապես անձի ձևավորման համար պատասխանատու շրջաններում:

Օգտագործված գրականություն ցանկ

1. Безруких М.М., Леворукий ребенок в школе и дома. – Екатеринбург: ЛИТУР, 2001. – 320 с.
2. Бишоп Д.В., Право-леворукость с расстройствами развития // Школа здоровья, 1995. – №2. – 89 с.
3. Доброхотова Т.А., Брагина Н.Н., Левши. – М., 1994. – 231 с.
4. Макарьев И., Если ваш ребенок левша. – СПб: Лань, 1995. – 128 с.
5. Сиротюк А.Л., Обучение детей с учетом психофизиологии: Практическое руководство для учителей и родителей. – М.: ТЦ Сфера, 2001. – 128 с.

Получено: 28.10.2022

Received 28.10.2022

Рассмотрено: 03.11.2022

Reviewed 03.11.2022

Принято: 07.11.2022

Accepted 07.11.2022

Journal "Education in the 21st Century", Vol1-8/2/, 2022



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License